

Հաստատված է
**«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»**
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 21-ի N 6-L որոշմամբ

ՆԿԱՐԱԳԻՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈԼՈՐՏԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ

1. ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գործատուի անվանում	«Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամ (այսուհետ՝ Հիմնադրամ)
Պաշտոն	Հանրային իրավունքի ոլորտի փորձագետ
Աշխատանքի ընդունող և աշխատանքից ազատող մարմին	Հիմնադրամի տնօրեն
Ղեկավար	Անմիջականորեն ենթակա և հաշվետու է Հիմնադրամի տնօրենին
Ենթակա	Ենթականեր չունի

2. ՊԱՀԱՆՋՆԵՐ ԱՇԽԱՏՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Կրթություն	«Իրավագիտություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն «Իրավագիտություն» մասնագիտությամբ գիտական աստիճանի առկայությունը ցանկալի է
Աշխատանքային փորձ	<ol style="list-style-type: none"> 1) իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և 1 տարվա մասնագիտական ստաժ, որից առնվազն 6 ամիսը պետք է կապված լինի իրավաստեղծ գործունեության հետ, կամ 2) ասպիրանտի, հայցորդի կարգավիճակ և 2 տարվա մասնագիտական ստաժ, որից առնվազն մեկ տարին պետք է կապված լինի իրավաստեղծ գործունեության հետ, կամ 3) 3 տարվա մասնագիտական ստաժ, որից առնվազն մեկ տարին պետք է կապված լինի իրավաստեղծ գործունեության հետ*: <p>*Մասնագիտական ստաժում հաշվառվում է միայն վերջին 4 տարիների ընթացքում աշխատած ժամանակահատվածը:</p>
Մասնագիտացում	Հանրային-իրավական* *Մասնագիտացումը հավաստվում է դիպլոմներով, վկայագրերով, ԲՈՒՀ-ի կամ ԲՈՀ-ի տեղեկանքով և (կամ) աշխատանքային գործունեության բնույթի վերաբերյալ փաստաթղթերով
Այլ գիտելիքներ	Հիմնադրամի գործունեությանը առնչվող իրավական ակտերի պատշաճ իմացություն

Լեզուների իմացություն	1. Հայերեն (գերազանց), 2. Ռուսերեն (լավ), 3. Անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն (լավ):
Համակարգչային գիտելիքներ	MS Office
Առավել անհրաժեշտ անձնային հատկանիշներ	<ul style="list-style-type: none"> ▪ Ստեղծագործական հմտություններ, ▪ Աշխատանքային գործառույթների արդյունքների բարձրորակություն, ▪ Կարգապահության և պատասխանատվության բարձր զգացում, ▪ Բժախնդրություն, ▪ Ինքնակատարելագործման ձգտում:
Այլ հմտություններ	Ուժեղ ներքին և արտաքին հաղորդակցման հմտություններ

3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

3.1.	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ հանրապետական գործադիր մարմինների հետ համատեղ հիմնադրամի կանոնադրական խնդիրներին վերաբերող ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը,
3.2.	Հիմնադրամի ծրագրերի իրականացմանը մասնակցող կազմակերպությունների գործունեության զարգացմանն ուղղված նյութական կամ խորհրդատվական աջակցությունը,
3.3.	Հայաստանի Հանրապետության կարգավորիչ (իրավական կարգավորման) քաղաքականության մշակմանը, կարգավորիչ կառավարման ներդրմանը և զարգացմանն աջակցելը,
3.4.	Ծավալուն հասարակական հարաբերությունների կարգավորման նոր մոտեցումներ նախատեսող կամ առավել կարևորություն ունեցող օրենսդրության զարգացման հայեցակարգերի մշակման աշխատանքների իրականացումը,
3.5.	իրավական ակտերի մշակման տարեկան ծրագրերի կազմումը,
3.6.	օրենսդրության մշակման ու զարգացման միջազգային կազմակերպությունների և իրավաստեղծ մարմինների կողմից մշակված մեթոդական ուղեցույցների ուսումնասիրման ու փորձի փոխանակման հիման վրա իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացի մեթոդական կազմակերպումը և իրականացումը, այդ թվում՝ իրավական ակտերի նախագծման կազմման մեթոդական ցուցումների մշակումն ու զարգացումը,
3.7.	իրավական ակտերի նախագծերի մշակման դեպքում դրանց հայեցակարգերի նախապատրաստումը,
3.8.	Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության վերլուծությունը,
3.9.	Հայաստանի Հանրապետության օրենսդրության զարգացման վերաբերյալ առաջարկությունների մշակումը և տվյալ բնագավառի համար պատասխանատու

	մարմիններին ներկայացնելը,
3.10.	օրենսդրություն մշակելու կարողությունների ընդլայնված վերապատրաստումների իրականացումը,
3.11.	իրավական ակտերի մեկնաբանությունների մշակումը,
3.12.	իրավահամեմատական վերլուծությունների իրականացումը և դրանց վերաբերյալ նյութերի ու տեղեկանքների հրապարակումը,
3.13.	նորարարական իրավական նախաձեռնությունների, վերլուծությունների իրականացումն ու արդի իրավունքի զարգացումը,
3.14.	օրենքով պետական այլ մարմիններին չվերապահված ոլորտներում Հիմնադրամի կողմից կազմված իրավական ակտերի ոչ պարտադիր կարգավորման ազդեցության գնահատման իրականացումը,
3.15.	հոգաբարձուների խորհրդի կողմից Հիմնադրամին հանձնարարված ոլորտներում նորմատիվ իրավական ակտերի կիրարկման մշտադիտարկման իրականացումը,
3.16.	հոգաբարձուների խորհրդի կողմից Հիմնադրամին հանձնարարված ոլորտներում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների իրականացման համար բավարար իրավական դաշտի մշակումը,
3.17.	հոգաբարձուների խորհրդի կողմից Հիմնադրամին հանձնարարված ոլորտներում Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատման, ինչպես նաև հստակեցմանը և պարզեցմանն ուղղված աշխատանքների ու ծրագրերի իրականացումը,
3.18.	տեղական և միջազգային իրավավերլուծական տեղեկատվական շտեմարաններին, բազաներին անդամագրումն ու դրանց հասանելիության ապահովումը՝ հիմնադրամի հետ համագործակցող անձանց ու կառույցներին,
3.19.	հետազոտական, տեղեկատվական, փորձագիտական, վերլուծական և խորհրդատվական աշխատանքների կազմակերպում ու իրականացում,
3.20.	ուսումնամեթոդական նյութերի մշակում և դասընթացների կազմակերպում,
3.21.	գործարարությանն աջակցող ծառայությունների և գործարար ծրագրերի մշակման ծառայությունների մատուցում,
3.22.	Հիմնադրամի մարմինների իրավական ակտերով, որոշումներով և հրամաններով իրեն վերապահված այլ գործառույթների և Հիմնադրամի տնօրենի կողմից տրված այլ հանձնարարականների կատարում